

Դիմակայելով փոթորկին. մեկնաբանություններ Հայաստանի և «սահմանային տնտեսության» մասին

Ռիչարդ Կիրակոսյան, Միջազգային հարաբերություններ

Վերջին մի քանի զարգացումները միայն ամրապնդեցին համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա: Ընդ որում, նշանները ցույց են տալիս, որ առաջիկա ամիսներին անկումը միայն շարունակվելու է խորանալ:

Հայաստանում տնտեսական ճգնաժամի խորացման վերջին ցուցիչների շարքում են ՀՀ կենտրոնական բանկի զեկույցը, որտեղ նշվում է, որ դրամական փոխանցումների հոսքը Հայաստան նկատելիորեն նվազել է: Ըստ ԿԲ մարտի 31-ի զեկույցի՝ տրանսֆերտներ իրականացնող բանկերում այս տարվա առաջին երկու ամիսներին դրամական փոխանցումների մակարդակն անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 20 տոկոսով:

Բացի այդ, քանի որ փոխանցումները կատարվում են ոչ միայն բանկային համակարգի միջոցով, բանկային փոխանցումների իրական կրճատումը ենթադրում է երկիր մտնող գումարների ավելի մեծ կրճատում: Այլ նշաններ վկայում են ավելի խոր ու երկարատև տնտեսական անկում:

Այս տարվա հունվար և փետրվար ամիսներին 3 տոկոսով նվազել է նաև Հայաստանի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)՝ պաշտոնապես ավարտելով երկնիշ տնտեսական աճի տարիների ժամանակաշրջանը: Հայկական պետության համար ավելի մտահոգիչ է այն լուրը, որ նույն ժամանակաշրջանում մոտ 230 միլիոն դոլարով կամ գրեթե 15 տոկոսով նվազել է նաև հարկերի հավաքումը:

Այլ նշաններ վկայում են ավելի խոր ու ավելի երկարատև տնտեսական անկում: Ըստ Երևանի անշարժ գույքի խոշորագույն մասնավոր գործակալությունների տվյալների՝ Հայաստանի անշարժ գույքի շուկան, որի ուռճացված գները երկար ժամանակ համարվում էին արհեստականորեն պահպանվող, այժմ գտնվում է ուժեղ ճնշումների տակ՝ ցածր պահանջարկի և ընկնող գների պատճառով: Երևանի անշարժ գույքի շուկայի այսպես կոչված «փուչիկը» սկսել է փուլքը թողնել. անշարժ գույքի գործարքների վիճակագրությունը վկայում է տների վաճառքի և վարձակալման գների կտրուկ անկում:

Նման զարգացումների պարագայում Հայաստանի կառավարությունը վերջերս որոշում է ընդունել մինչև տարեվերջ «հետաձգել» 359 միլիոն դոլարի նախատեսված ծախսեր՝ հուսալով, որ առաջիկա ամիսների ընթացքում տնտեսական փոթորիկը կհանդարտվի:

Հայաստանցի պաշտոնյաների վերջին ամիսների մշտական հավաստիացումների և մշուշոտ լավատեսության ֆոնի վրա այս քայլը ենթադրում է, որ ահագնացող տնտեսական ճգնաժամը վերջապես չափազանց լրջացել է այն անտեսելու համար: Իրականում ծախսերը կրճատելու կառավարության որոշումը լուրջ քայլ է, քանի որ փաստորեն սառեցնում է բյուջեով նախատեսված ծախսերի մոտ 14 տոկոսը:

Հայացք դեպի սահմանները

Այդուհանդերձ, այս բացասական տնտեսական միտումների լույսի ներքո կարող է լինել առնվազն մասնակի ելք այս ահագնացող ճգնաժամից: Բաց սահմաններն ու ազատ առևտուրը վաղուց են համարվում տնտեսական աճի ու զարգացման անհրաժեշտ պայմաններ: Հայաստանի պարագայում տնտեսական մեկուսացումը փակ սահմանների և դեպի ծով ելքի բացակայության պատճառով առանձնապես դաժան բնույթ է ձեռք բերել՝ տնտեսական խոցելիությունն էլ ավելի խորացնելու միտումով:

Եվ հենց «սահմանային տնտեսության» առավելություններն են, որ կարող են երկրի համար ելք հանդիսանալ ճգնաժամից: «Սահմանային տնտեսության» կարևորության վերջին օրինակ կարելի է դիտարկել զբոսաշրջիկների զանգվածային ներհոսքը հարևան Իրանից: Մարտի վերջին շաբաթվա ընթացքում մոտ 20.000 իրանցի զբոսաշրջիկներ ժամանեցին Երևան նշելու իրանյան Նոր տարին՝ *Նովրուզը*:

Իրանցի զբոսաշրջիկների այս վերջին ներհոսքը նոր հույսեր բերեց հայաստանցի առևտրականներին, հյուրանոցներին ու ռեստորաններին: Հազարավոր երիտասարդ իրանցիներ այստեղ նշում էին իրենց ժամանակավոր «ազատագրումը» ոգելից խմիչքներ օգտագործելու իրանյան արգելքից:

Որոշ տնտեսագետների հաշվարկներով՝ միջին զբոսաշրջիկը Հայաստանում ծախսում է շաբաթական մոտ 1000 դոլար, սակայն տվյալ դեպքում զբոսաշրջային եկամտից ավելի է կարևորվում այդ իրադարձության երկարաժամկետ նշանակությունը:

Զբոսաշրջիկների բերկրանք

Ավելի ստույգ՝ իրանցի զբոսաշրջիկների ներհոսքը Երևան՝ նշելու իրենց Նոր տարին անկաշկանդ ու բարյացակամ միջավայրում, հաստատում է միջսահմանային առևտրի և զբոսաշրջության պոտենցիալ առավելությունները: Դա նաև ցույց է տալիս, թե ինչ կարող է տեղի ունենալ, եթե Թուրքիան բացի Հայաստանի երկար փակված սահմանը: Իրանցի զբոսաշրջիկների փոխարեն Հայաստանը կարող է նույն հաջողությամբ ակնկալել քրդերի ու թուրքերի անսպասելի ներհոսք, որոնք ուրախությամբ կհատեն մի քանի ժամվա ճանապարհը նոր բացված սահմանով՝ վայելելու Հայաստանի նոր ու բարյացակամ մթնոլորտը:

Քրդերի համար Հայաստան այցելելու այս նոր հնարավորությունը ոչ միայն նշանակում է զվարճանքներ ու զբոսաշրջություն, այլև, ինչն ավելի կարևոր է, հնարավորություն է տալիս ժամանակավորապես մոռանալու թուրքական ոստիկանության ու անվտանգության ուժերի մշտական վերահսկողության տակ գտնվող իրենց ճնշող առօրյան:

Այս առումով Հայաստանն իրական հնարավորություն է ստանում դառնալու զբոսաշրջության նոր բումի ապահով հանգրվան: Եվ Հայաստան կարող են ժամանել ոչ միայն իրանցիները, որոնք կարոտ են սեփական երկրում արգելված առօրյա կյանքի ազատություններին, այլև զբոսաշրջիկների նոր ալիքներ նոր բացված հայ-թուրքական սահմանով: Եվ սա կարող է լինել բաց սահմանի ամենակարևոր տնտեսական ձեռքբերումներից մեկը, որի օգուտներն ակնհայտ են երկու կողմերի համար:

Սակայն հերթական քայլն այժմ Թուրքիայինն է, որը պետք է բացի իր իսկ փակված սահմանը: Թուրքիան նաև պետք է ընդունի այն իրողությունը, որ Հայաստանն իր հարևանն է՝ հաստատելով նորմալ դիվանագիտական հարաբերություններ, և պետք է համակերպվի Հայոց ցեղասպանության հարցին անդրադառնալու անհրաժեշտության հետ: Միայն այդ դեպքում սահմանի բացումը կօգնի բացելու նաև մտքերը: